անցնելով Հուէրգա ըսուած հրուանդանէն՝ կը պաշարուի Ֆէրրինանտօյ էլ Քադոլիքօյ ապստամբ նաւէն, զոր կ'ընկղմէ 600 հոգի մէջը, որոնցմէ միայն հինգ հոգի կրնան ազատիլ։

19. — Սպանիոյ Նաւատորմը Ճամբայ կ'ելլէ Ճիպրալթարէն։ — Ռումանիոյ իշխանն Կարոլոս՝ կը ջանայ հատուցանել տարեկան տուրքն առ բարձրագոյն Դուռն։ — Մէնցել նկարիչը յանձնառու կ'ըլլայ Բրուսիոյ Թագաւորին հրամանաւ իւղաներկ նկարելու Բոցտամի զօրահանդէսն 'ի պատիւ Թագաւորին Իտալիոյ։

20. — Հանդիսապէս բացուեցաւ 'ի Կապիտոլիոն ԺԱ ժողովն Իտալացի գիտնոց։ — Հռոմ կը գրաւուին տէրութեան կողմանէ շատ մը վանքեր։ — Բոլոր Գաղղիա կը հաստատուի կաթուղիկէ հռոմէական ծէսը փոխանակ կալլիգան ծիսուն։

21. — Բօզէնի կառավարութիւնը դատապարտեց զարքեպիսկոպոսն Լտոքովսքի 300 թալէր տուգանաց և երկու ամսուան բանտի։ — Ամերիկա պատահած սնանկութեանց մէջ կաթոլիկ կղերը կորուսեր է 380,000 տոլար։ Անգլիոյ և Ամերիկոյ կառավարութիւնները կը բողոքեն ընդդէմ իրաւանց օտար ստացուածոց, զոր մէջ բերեր են Հռոմէական վարժարանին առաջնորդները։

22. — Մագուրանայի գունդը յաղթուեր է Դրիսգանի և Միրէգ Գալլոյ զօրագլուխներէն։ — Դեղնատենդն 'ի Մեմփիս երթալով աւելի կը Ճարակի։ — Եգիպտական կառավարութիւնը իրաւախոհութեան կը մտնէ տեղացւոց հետ։ — Կոստանդնուպոլիս Գուրիէ տ'Օրիան լրագիրը կը խափանուի երկու ամիս՝ իշխանութեան դէմ գրելուն համար։

23. — Գաղղիոյ ազգային ժողովոյն ձախակողմեան կեդրոնը կ'որոշէ յարատևելու պահպանողական հասարակապետութեան քաղաքականութեան մէջ։ — Պոնաբարդեան երեսփոխանները կը պատրաստուին բողոքելու ընդդէմ վերանորոգման միապետութեան։

24. — Մարսէյլ գտնուող սպանիացի շոգենաւները բեռ չեն առնուր՝ վախնալով որ չըլլայ թէ Կարթագինէի ապստամբ կրկնյարկ նաւերէն բռնուին։ — Բարիզ Լ'Աւէնիր Նասիօնալ լրագրին վաճառումն արգիլուեցաւ՝ Շամպորի կոմսին դէմ հատուած մը գրելուն համար։

# ՄԵԾԱՆՈՒՆ ՆՆՋԵՑԵԱԼՔ
## 1873 ՏԱՐԻՈՅՆ

ՅՈՎՍԷՓ ՊԻԱՆԳԷԴԴԻ վէնետկեցի համբաւաւոր գրագէտ. հեղինակ գեղեցիկ գրոյն Scrittore italiano, Իտալիոյ ծերակուտին անդամ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԻՖՖԻ լոմպարտացի նշանաւոր մատենագիր ծաղկահասակ։

ՊԵՏՐՈՍ ՃԻԱՆՆՈՆԷ մոտէնացի մեծ հայրենասէր և բանաստեղծ. մեռեալ 'ի Փլորենտիա 'ի հասակի 86 ամաց։

ԱՆՆՈՒՆՑԻԱԴԱ ՃԻՈՎԱՆՆԻՆԻ Ճարտար կին մանրանկարիչ մարմարինի վրայ. ծննդեամբ հռոմէացի. մեռեալ 'ի հասակի 73 ամաց։

ՈՐԱՏԻՈՍ ԿՐԻԼԻ ամերիկացի անուանի լրագրապետ, խմբագրող լրագրին The Tribune, նուիրակ ընդդէմ Կրանդի 'ի նախագահութեան Միացեալ Նահանգաց, վերջին ընտրութեանց ժամանակ. մեռեալ 'ի հասակի 61 ամաց։

ՀԱՅՐ ՎԻՆԿԵՆՏԻՈՍ ԵԱՆՏԷԼ բազմահմուտ ընդհանրական մեծաւոր կարգին Քարոզչաց. մեռեալ 'ի Հռոմ։

ԿԱՐՈԼՈՍ ԲՈՍՍԷՆԴԻ լոմպարտացի մեծահամբաւ Ճարտարապետ, Իտալիոյ ծերակուտին անդամ. մեռեալ 'ի Հռոմ։

ԳՈՒԼԻԷԼՄՈՍ ՔԱՄԲՇՈՒԼԴԷ պատմաբան կրօնից, դասատու 'ի համալսարանն Պոնի։

Փ. Ք. ԼՈՐՏ անգլիացի հռչակաւոր բնագէտն, վերակացու Պրայդընի Ձկնարանին (Aquarium)։

ՀԵՆՐԻԿՈՍ ԲԼՈՆ գաղղիացի աշխարհածանօթ տպագրապետ։

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ՍՈՄՄԸՐՎԻԼ սկովտացի մեծահամբաւ աշխարհագիր, Ճանապարհորդ և գրաւոր մշակ բնագիտական, բնական և աստեղաբաշխական ուսմանց. մեռեալ 'ի Նէապոլիս 'ի հասակի 92 ամաց։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՏՈԼԻՆԻ նշանաւոր շարադրող երաժշտութեան. մեռեալ 'ի Պոլոնիա 'ի հասակի 84 ամաց։

ՓԵԼԻՔՍ ՎՈՒԱԶԷՆ Գաղղիացի անուանի բժիշկ յիմարաց. մեռեալ 'ի Վանվը 'ի հասակի 78 ամաց։

[1] ԼՈՐՏ ԵԴ. ԼԻԴԴԸՆ ՊՈՒԼՈՒԷՐ անգլիացի անուանի վիպասան։

ՏԸ ՌՈՒԺԷ գաղղիացի մեծահամբաւ եգիպտագէտ։

ԿԱՐՈԼՈՍ ՏԻՒԲԷՆ գաղղիացի քաղաքագէտ։

ԴՈՄԻՆԻԿՈՍ ՄՕՒՐՕՅ իտալացի հայրենասէր ծերունի, ձախակողմեան երեսփոխան։

1 Թէպէտ առաջիկայ անուններ մինչև աստղանիշ անունը հրատարակեր էինք անցեալ տարւոյն Բ. Պրակին մէջ, բայց կարգին վրայ ըլլալուն՝ այլոց հետ կրկին անգամ դրինք հոս։

digitised by A.R.A.R.@

ՆԱՊՈԼԷՈՆ Գ անկեալ կայսրն գաղղիացւոց. մեռաւ 'ի Չիզլհըրստ։

ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ՏԱԼԼ' ՕՆԿԱՐՈՑ վենետկեցի անուանի բանաստեղծ։

ԼՈՒԻՃԻ ՏԷ ՊԼՆՆԷՏԻԿԴԻՍ նշանաւոր գրագէտ, մեծապէս սիրող Ուգոյ Ֆոսգոլոյի։

ՊԵՏՐՈՍ ԲԷՔԱՐՍՔԻ ռուս պատմագիր, կաճառորդ Ճեմարանին Բեդրոպուրկի։

ՅՈՎՍԷՓ ԴԻԷՐՑԱԿԻ միլանցի անուանի մարդասէր բժիշկ և տնտեսագէտ։

ՄԱՔՍ ՎԱՑՏ Ֆիամմինկ մեծանուն զուարճաբան գրագէտ։

ԴԱՆԷԼ ՊԵՌՆԱՐ փարիզցի գրագէտ, հեղինակ դիցաբանական բառագրոց և բանաստեղծութեան պատմութեան։

Գ. Ա. ՊՐԻՒԼԼԷ գաղղիացի բնապատում և իմաստասէր. մեռաւ 'ի Տիժոն։

Ի. Բ. Հ. ԳԱՐՖԻԿ գաղղիացի երևելի պատմագիր, հեղինակ գաղղիական զանազան մասնական պատմութեանց, որք բովանդակապէս կը կազմեն 80 հատոր գաղղիական պատմութիւն. ծնեալ 'ի Մարսէյլ 1802։

ՅՈՒԼԻՈՍ ՖՌԻՐՍԴ անուանի եբրայագէտ, հրեայ գերմանացի։

ՄԻՔԱՅԷԼ ՀՄԻՐՈՎ ռուս գրագէտ, մեռաւ յանօթութենէ 'ի Բեդրոպուրկ 42 տարեկան։ Կ'ըսուի թէ զարմանալի խնայողական մատենադարան մը կազմած էր 12,000 հատոր, Ռուսիոյ վե՛րաբերեալ ձեռք ձգած յօդուածները լրագրաց մէջէն կտրելով և իրարու կցելով։

Մ. ՔԱՉԷՆՈՎՍՔԻ ռուս իրաւագէտ. մեռաւ 'ի Խարքով, ուր կը վարժապետէր։

ՀԵՆՐԻԿ. ՔԱՈՒՐՑ չինագէտ և պատմիչ գերմանական գրագիտութեան. նշանաւոր հակառակորդ եկեղեցական կուսակցութեան 'ի Զուիցերի. ծնեալ 'ի Բարիզ 1805. հալածուելով չափազանց ազատակրօն կարծեացն համար և բանտուելով 'ի Պաւիերա, բնակութիւնն հաստատած էր 'ի Զուիցերի, ուր Աարաուի գրադարան էր, և Արկովիա նահանգին դպրոցին դասատու։

ՓՐԱՆԿԻՍԿՈՑ ԻՆԿԱՆՆԻ լոմպարտացի քաջ նկարիչ. մեռաւ Վարէզէի մօտ 78 տարեկան։

ՍՏԱՆԻՍԼԱՒ ԺՈՒԼԻԷՆ գաղղիացի անուանի չինագէտ։

Պ. Ց. ՄԱՃՃԻ կաճառորդ լոմպարդական ճեմարանին, բազմահմուտ և մեծարգիւն հնագէտ։

Դ. ՍՆԱՔԷՆԳՈՒՐԿ Պեռլինոյ զինուորական ճեմարանին և աղջկանց բարձրագոյն դպրոցին դասատու, և Պեռլինոյ իտալական բարեգործական ընկերութեան նախագահ։

ՍԳԻՐԻՏԻՈՆ ԴԻՐԻՔԱՈՒԲԻՍ յոյն համբաւաւոր պատմաբան և քաղաքագէտ։

ՅՈՎՍԷՓ ԱՐԳՈՆԱԴԻ ՎԻՍԳՈՆԴԻ իտալական տէրութեան ծերակուտի անդամ. մեռաւ 'ի Միլան 76 տարեկան։

ԳԷՈՐԳ ԳԱԴԼԻՆ ամերիկացի նշանաւոր ճանապարհորդ և գրող ճանապարհորդութեանց։

ՋԸՐՉ անգղիացի հելլենասէր զօրապետ, մեռաւ 'ի հասակի 97 ամաց։

ՌԱՓԱՅԷԼ ԼԱՄԲՐՈՒՍՔԻՆԻ մեծարելի դաստիարակ, և քաջ տեղեակ արուեստի երկրագործութեան։

ՅՈՎՍԷՓ ԼԷՄԱՆ բազմարդիւն հիմնարկող և տպագրիչ Պեռլինոյ անուանի ուսումնաթերթին Magazin für Kunde der Literatur des Auslandes։

ՄԱՑԹԷՈՍ ՄՕՐԻ ամերիկացի բնագէտ և աստեղաբաշխ։

ԵՏՈՒԻՆ ՆՈՐՐԻՍ անգղիացի մեծահամբաւ լեզուագէտ և արևելագէտ. գլխաւորապէս ասորաբանութեան շատ նպաստ մատոյց։

ԳԷՈՐԳ ԲԱՄԸՐ ԲԸԴՆԷՄ ամերիկացի աշխարհածանօթ տպագրող և հեղինակ։

ԿՈՄՍ ՊԱՒՂՈՍ ՍԷԿԻՒՐ գաղղիացի մեծարգոյ պատմագիր. մեռաւ 'ի Բարիզ 93 տարեկան։

ԱՄԵՑԷ ԹԻԷՐՐԻ գաղղիացի գերածայրեալ պատմաբան, հեղինակ Պատմութեան Կէլտաց 3 հատոր, եղբայր անուանի Աւգոստինոս Թիէրրիի, որ մեռած է 'ի 1856։

ԿԱՐՈԼՈՍ ՕԼՍԴՈՆ ԳՈԼԼԻՆՍ անգղիացի նկարիչ և գրագէտ։

ԴՈՄԻՆԻԿՈՍ ՏՈՆՑԷԼԼԻ իտալացի անուանի երգիչ, մեռաւ 83 տարեկան 'ի Պոլոնիա։

ՋՕՐԱՎԱՐ ՖՕՔՍ անգղիացի համբաւոր դրամագէտ։

ՍԷՆ ՄԱՐԿ ԺԻՐԱՐՏԷՆ գաղղիացի անուանի մատենագիր և քաղաքագէտ. դասատու մատենագրութեան 'ի Սորպոն։

ՊԵՏՐՈՍ ԼԱՖՈՆ գաղղիացի գովելի դերասան. մեռաւ 72 տարեկան։

ՅՈՒՍՏՈՍ ԼԻՊԻԿ գերմանացի մեծահռչակ տարրագէտ։

ԼՈԴԳՆԷՐ դասատու սանսկրիտ լեզուի 'ի համալսարանին Տըպլինոյ, աշակերտ Պոբի։

* ԳՈՒԼԻԷԼՄ ԴԱՅԴ անգղիացի քաջ ճարտարապետ։

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԱՆԶՈՆԻ իտալացի անմահանուն բանաստեղծ։

ՎԱՆ ԼԻՄԲՈՒՐԿ ԲՐՈՒՈՒԷՐ հոլանտացի գրագէտ և բազմահմուտ բանասէր։

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՀԱՆՍԹԷՆ նորուեկիացի բազմահռչակ աստեղաբաշխ. մեռաւ 'ի Քրիստիանիա 89 տարեկան։

ՃՈՆ ՍԴՈՒԱՐԴ ՄԻԼ անգղիացի անուանի տնտեսաբան և քաղաքագէտ։

ՆԱՐԿԻԶ ԳՈՄՈՆ գաղղիացի հնախօս։

Պ. Ա. ԼԸԳՐԷՆ գաղղիացի քնարերգու և թատերգակ բանաստեղծ, կաճառորդ գաղղիական ճեմարանին. ծնեալ յամին 1785 և վախճանեալ յամին 1873 մայիս 27։

ԱՆՃԷԼՈՑ ՄԱՐԻԱՆԻ իտալացի քաջ երգահան և

digitised by A.R.A.R.@

երգայարգար, ու աննման վերատեսուչ երաժշտաց (Orchestre)։

ԿԱՐՈԼՈՍ ԲՐՈՄԻՍ բելճիքացի անուանի հնախօս և շինուածապետ։

ՈՒՐԲԱՆՈՍ ՌԱՏՏԱՑՑԻ բելճիքացի անուանի քաղաքագէտ։

ԿԱՐՈԼՈՍ ՌԻԿՈՑ ՏԸ ՃԸՆՈՒԻՑԼԻ գաղղիացի ծովակալ։

ՓՐԱՆՍԻՍԿՈՍ ՌՈՍՍԻ միլանցի նշանաւոր քննասէր պատերազմական ուսմանց։

ԼՈՒՏՈՎԻԿՈՍ ՎԻՏԷ գաղղիացի պատմաբան, անուանի քննագատ արուեստից, կաճառորդ գաղղիական ճեմարանին։

ԿԱՐՈԼՈՍ Ա-ՎԱԼԼԷ բելճիքացի նշանաւոր գրագէտ, պատմաբան և քերթող։

ԵՒԳԻՆԷՈՍ Տ'ԱՌՆՈՒ խմբագրող Լա Դիւռոփ լրագրին, գործակից Ֆիկարօ օրագրին Բարիզու. մեռաւ ծաղիկ հասակին մէջ 'ի Կոստանդնուպոլիս։

ԳՈՒԼԻԷԼՄՈՍ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՐՇՏԱՆՏ գանեցի նշանաւոր նկարիչ։

ՎՈԼՓԿԱՆԿ ՄԷՆՑԷԼ գերմանացի բազմահմուտ քննագատ պատմաբան, լրագրապետ, սկզբնագիր, յանգգնաբան. իրեն գլխաւոր գրուածքն են Գերմանական Պատմութիւն և Գերմանական Մատենագրութիւն։

ԻՇԽԱՆ ՅՈՎՍԷՓ ԲՈՆԻԱՏՈՎՍՔԻ, լեհացի երգահան ոչ աննշան. մեռաւ 'ի Լոնտոն։

ՓՐԻՏ. Կ. ՌԱՈՒՄԷՐ գերմանացի պատմաբանից Նեստորը, մեռաւ 'ի Պեռլին 'ի հասակի 92 ամաց։ Իր գործոց գլուխն է Պատմութիւն Հոհէնշդաուֆէնաց վեց հատոր։

ԱՌՆՈԼՏՈՍ ԱՐԻ ՇԷՖՖԷՐ եղբօրորդի համանուն գաղղիացի երևելի պատկերահանին, ինքն ալ նշանաւոր նկարիչ. մեռաւ 'ի Վենետիկ ծաղիկ հասակին մէջ։

ԱՏՈԼՓՈՍ ՊԱԳՄԱՅՍՏԷՐ գերմանացի բանասէր և գրագէտ. մեռաւ 'ի Շտուտկարդ։

ՕՏԻՑԼԵՈՆ ՊԱՐՐՈՑ գաղղիացի անուանի քաղաքագէտ և հրապարակախօս։

ԱՆՏՈՆ ՊԻԼԼԻՌ վենետիկեցի նշանաւոր փաստաբան, երեսփոխան ռամկավարական կուսակցութեան Իտալիոյ ազգային ժողովոյն մէջ. մեռաւ 'ի հասակի 37 ամաց։

ՓԻԼԱՐԷՏ ՇԱԼ գաղղիացի նշանաւոր մատենագիր, դասատու Գաղղիոյ Վարժարանին (Collège de France) Բարիզու. մեռաւ մաղձացաւէ 'ի Վենետիկ։

ՏԻԿԻՆ ԳԻԼԱՑՎ անգղիացի վիպասան։

ՃՈՆ ՌՈՒԷԼՍ ՖՕՍՏԷՐ ամերիկացի համբաւաւոր երկրաբան. մեռաւ 'ի Չիգակոյ։

ՎՈԼՖԿԱՆԿ ՄԻՒԼԼԷՐ ՖՈՆ ՔԷՆԻԿՍՎԻՆՏԷՐ գերմանացի ժողովրդական քերթող։

ԼԷՈՓՈԼԴ ՕՌԼԱՆՏԻՆԻ իտալացի եղերերգակ արուեստաւոր. մեռաւ 'ի յիմարանոցին Պոլոնիոյ։

ՀՈՒՆԱԼՏՈՍ ՀՈՒՆԱԼՏԻ վենետկեցի ծեր և անուանի արձանագործ։

ԿՈՒՍՏԱՒ ՌՈՋԷ բրուսիացի համբաւաւոր տարրագէտ և մետաղաբան։

ԿԱՐՈԼՈՍ ՇԷԼ գերմանացի բանասէր. ծնեալ 'ի Մանհայմ 1793։

ՓՐԱՆՍԻՍԿՈՍ ՎԻՆՏԷՐՀԱԼՏԷՐ գերմանացի նշանաւոր պատկերահան։

ԴԱՒԻԹ ԳԻՈՍՍՈՆԷ ճենովացի բժիշկ և երևելի եղերերգակ բանաստեղծ։

ՀՌԷՆԷ ԳԻԼԷՄԱՆ գաղղիացի անուանի եղերերգակ բանաստեղծ։

ԳՈՍՏ գաղղիացի հռչակաւոր կենդանաբան և անդամազնին, կաճառորդ ճեմարանին (Institut) Գաղղիոյ։

ԿԵԼԵՍՏԻՆ ՆԱՆՏԷՕՅԼ գաղղիացի անուանի նկարիչ։

ԱՒԳՈՍՏ. ՆԷԼԱՏՈՆ բարիզցի աշխարհածանօթ վիրաբոյժ։

ՕԼԻՎԷՅՐԱ բորդուկալցի նշանաւոր բժիշկ։

ԳՈՒԼԻԷԼՄ. ՌԸՍՍԷԼ սկովտացի քերական և հռետոր. մեռաւ 'ի Լէնգեստըր Միացեալ-Նահանգաց Ամերիկոյ։

ԵՒՍՏ. ԴԻՍՔԻԷՎԻՉ հնախօս, տեսուչ և հիմնադիր Թանգարանին հնութեանց 'ի Վիլնա։

ԼՈՒԴ. ԱԿԱՍԻՋ հելուետիացի բնապատում, գերահռչակ ձկնաբան. մեռաւ 'ի Միացեալ-Նահանգս Ամերիկոյ։

ՆԻԿՈՑ ՊԻՔՍԻՈՑ իտալացի արիասիրտ զօրավար, վաղեմի ծովակալ, եռանդուն հայրենասէր։

ԱՒԳ. ՏԸ ԼԱ ՌԻՎ ժընևցի անուանի բնագէտ։

ՏԻՒ ՊՈՒՌ ՏԸ ՊՕՇԷՆ գաղղիացի բանաստեղծ։

ԵՏ. ԲԷՌՈՑ հիմնադիր լրագրին Պելճիքայի Indépendance Belge։

ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԷ ՍԳԱՌԲԷԼԼԻՆԻ հռովմայեցի նշանաւոր չափաբեր, ուղղիչ օրագրին Corrispondenza Scientifica։

Վ. ՎԱԼԷՑՆ գաղղիացի լրագրապետ և վիճաբան։

ՆԻՔՈԼԱ ԿԻՔԱ ռումէն երբեմնաւորդ իշխանազուն. մեռաւ 'ի Բարիզ մենամարտութեան մէջ։

ՀԵՐՈՆԻՄ. ԲԻԳԳԻՈՆԻ իտալացի հելլենագէտ և հայրենասէր։

ԼԻՎԻՆԿՍՏՈՆ անգղիացի աշխարհածանօթ ճանապարհորդ։

digitised by A.R.A.R.@